

# «Իրավագիտություն» մասնագիտությամբ հեռակա մագիստրոսական ծրագրերի ընդունելության քննությունների հարցաշարեր

## «Դատական իրավունք և փաստաբանություն» մագիստրոսական կրթական ծրագիր

### «Քաղաքացիական դատավարություն»

1. Իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանության ձևերը: Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:
2. Քաղաքացիական դատավարությունը որպես իրավունքների դատական պաշտպանության ձև: Քաղաքացիական դատավարության խնդիրները:
3. Քաղաքացիական դատավարության փուլերը. հասկացությունը, ընդհանուր բնութագիրը:
4. Քաղաքացիական դատավարության (վարույթների) տեսակները:
5. Քաղաքացիական դատավարության իրավունքի հասկացությունը. առարկան, մեթոդը և համակարգը:
6. Քաղաքացիական դատավարության իրավունքի աղբյուրները. հասկացությունը, կազմը, կարգավորման ոլորտը, իրավաբանական ուժը:
7. Անալոգիայի ինստիտուտը քաղաքացիական դատավարությունում:
8. Սահմանադրական դատարանի որոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումների նշանակությունը քաղաքացիական դատավարությունում:
9. Քաղաքացիական դատավարության նորմերի գործողությունը ժամանակի ընթացքում, տարածության վրա և ըստ անձանց շրջանակի:
10. Քաղաքացիական դատավարության իրավունքի փոխհարաբերությունն իրավունքի այլ ճյուղերի հետ:
11. Քաղաքացիական դատավարության իրավունքի սկզբունքների հասկացությունը և նշանակությունը:
12. Սկզբունքների համակարգը և դասակարգումը: Սկզբունքների փոխադարձ կապը:
13. Կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները քաղաքացիական դատավարությունում:
14. Տնօրինչականության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:
15. Դատական վարույթի հրապարակայնության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:
16. Դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը

քաղաքացիական դատավարությունում:

17. Գործերի քննության բանավորության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:
18. Դատավարական խնայողությունը որպես արդարադատության արդյունավետության սկզբունք-կառուցակարգ:
19. Անմիջականության սկզբունքը քաղաքացիական դատավարությունում:
20. Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների հասկացությունը, դրանց առանձնահատկությունները:
21. Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների ծագման (առաջացման) նախադրյալները:
22. Դատավարական իրավահարաբերությունների օբյեկտը և բովանդակությունը:
23. Քաղաքացիական դատավարական իրավահարաբերությունների սուբյեկտները, նրանց դասակարգումը:
24. Դատավարական իրավունակություն և գործունակություն:
25. Դատարանը որպես քաղաքացիական դատավարական հարաբերությունների պարտադիր սուբյեկտ: Դատարանի կազմը:
26. Դատավորի բացարկ և ինքնաբացարկ:
27. Դատավարության մասնակիցների կազմը:
28. Գործին մասնակցող անձանց հասկացությունը, հատկանիշները և կազմը:
29. Գործի քննությանն օժանդակող անձանց հասկացությունը, հատկանիշները և կազմը:
30. Գործին մասնակցող անձանց հասկացությունը, կազմը, նրանց հատկանիշները:
31. Կողմերը քաղաքացիական դատավարությունում:
32. Երրորդ անձանց հասկացությունը և տեսակները, գործի քննությանը ներգրավվելու հիմքերը և դատավարական կարգը:
33. Դիմողները և դիմումի քննության ելքով շահագրգռված այլ անձինք:
34. Գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքները և պարտականությունները:
35. Դատակցության հասկացությունը և հիմքերը: Դատակցության տեսակները. պարտադիր և ֆակուլտատիվ դատակցություն: Դատակիցների մասնակցությունը վարույթին:
36. Ոչ պատշաճ կողմի հասկացությունը: Հայցվորի ոչ պատշաճ լինելու հետևանքները: Ոչ պատշաճ պատասխանողի փոխարինման դատավարական կարգը: Գործի քննությանը նոր պատասխանողի ներգրավումը:
37. Դատավարական իրավահաջորդության հասկացությունը և հիմքերը: Դատավարական իրավահաջորդության ձևակերպումը և իրավահաջորդի իրավական դրությունը:
38. Դատախազության խնդիրները քաղաքացիական դատավարությունում:
39. Քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցության ձևերը:
40. Դատախազի կողմից հայց հարուցելու հիմքերը և կարգը:

41. Դատական ակտերի բողոքարկումը դատախազի կողմից:
42. Դատախազի քաղաքացիադատավարական կարգավիճակը:
43. Այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձանց մասնակցության ձևերը, հիմքերը և նպատակները:
44. Այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձանց դատավարական կարգավիճակը:
45. Դատական ներկայացուցչության հասկացությունը և նշանակությունը:
46. Դատական ներկայացուցչության սուբյեկտների շրջանակը. որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք, որպես ներկայացուցիչ հանդես գալու արգելքը, ներկայացուցչին գործի քննությունից հեռացնելը:
47. Ներկայացուցչության հիմքերը և տեսակները:
48. Դատական ներկայացուցչի լիազորությունները, դրանց դասակարգումը և հաստատումը:
49. Գործը դատարանում վարելու լիազորագիր:
50. Ենթակայության հասկացությունը:
51. Դատական ենթակայության հասկացությունը: Քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա գործերի շրջանակը որոշելու չափանիշները:
52. Դատական ենթակայության տեսակները. բացառիկ, այլընտրանքային, պայմանական, պայմանագրային:
53. Միմյանց հետ փոխկապակցված գործերի ենթակայությունը:
54. Ենթակայության կանոնների խախտման հետևանքները:
55. Ընդդատության հասկացությունը և տարբերությունը ենթակայությունից: Ընդդատության տեսակները (առարկայական, տարածքային, գործառութային):
56. Տարածքային ընդդատության տեսակները (ընդհանուր, բացառիկ, այլընտրանքային, պայմանագրային, միմյանց հետ կապված գործերի) և քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու կանոնները:
57. Ընդդատության կանոնների խախտման հետևանքները: Գործի հանձնումը մեկ դատարանից մեկ այլ դատարան: Ընդդատության և ենթակայության մասին վեճերի լուծումը:
58. Դատավարական ժամկետների հասկացությունը և նշանակությունը:
59. Դատավարական ժամկետների տեսակները. օրենքով սահմանված և դատարանի կողմից նշանակվող ժամկետներ:
60. Օրենքով սահմանված ժամկետներ. գործի քննության և լուծման ժամկետներ, առանձին դատավարական գործողությունների կատարման ժամկետներ: Ժամկետի ողջամտությունը որոշելու չափանիշները:
61. Դատավարական ժամկետները հաշվելու կարգը:
62. Դատավարական ժամկետների կասեցումը:
63. Բաց թողնված դատավարական ժամկետների վերականգնումը. հասկացություն-

- նր, հիմքերը և դատավարական կարգը: Վերականգնման ոչ եթակա ժամկետներ:
64. Դատավարական ժամկետների երկարաձգումը, հասկացությունը և տարբերությունը դատավարական ժամկետների վերականգնումից:
  65. Դատական ծախսերի հասկացությունը և տեսակները քաղաքացիական դատավարությունում: Դատական ծախսերի ինստիտուտի գործառույթները:
  66. Պետական տուրք, հասկացությունը, գանձման օբյեկտները, տեսակները, դրույքաչափերը, վճարման կարգը: Պետական տուրքի վերադարձը:
  67. Պետական տուրքի գծով արտոնությունները, կազմը, կիրառման հիմքերը և կարգը:
  68. Գործի քննության հետ կապված ծախսեր, հասկացությունը, կազմը, կատարման կարգը: Փաստաբանի վարձատրության ծախսերը դատական ծախսերի համակարգում:
  69. Դատական ծախսերի հետ կապված պահանջներ ներկայացնելը:
  70. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման դատավարական կարգը: Դատական ծախսերի բաշխումը հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում:
  71. Կատարված դատական ծախսերի հատուցումը:
  72. Հայցային վարույթի հասկացությունը և էությունը:
  73. Հայցի հասկացությունը: Հայցի նյութաիրավական և դատավարական կողմերը:
  74. Հայցի տարրերը, հայցի առարկան և հայցի հիմքը: Հայցի տարրերի դատավարական նշանակությունը:
  75. Հայցերի դասակարգումը նյութաիրավական և դատավարական հիմքերով: Դասակարգման նշանակությունը: Խմբային հայցեր:
  76. Հայցի իրավունք, հայց հարուցելու իրավունք և հայցի բավարարման իրավունք:
  77. Հայց հարուցելու իրավունքի ծագման նախադրյալները և դրանց դասակարգումը: Հայց հարուցելու իրավունքի ծագման նախադրյալների և հայց հարուցելու իրավունքի իրականացման պայմանների փոխհարաբերակցությունը:
  78. Հայցի դեմ պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոցները, առարկություններ և հակընդդեմ հայց:
  79. Հայցային վարույթում տնօրինչական գործողություններ կատարելը, հայցի փոփոխում, հայցապահանջների միացում և անջատում, հայցից հրաժարում, հայցի ընդունում, հաշտության համաձայնություն, արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթաց սկսելը, վեճի հանձնում արբիտրաժի քննությանը:
  80. Հաշտարարությունը քաղաքացիական դատավարությունում:
  81. Հայցի ապահովում, հասկացությունը, հիմքերը և դատավարական կարգը: Համաչափության սկզբունքի պայպանումը հայցի ապահովման միջոցներ կիրառելիս: Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը կատարելու կարգը: Հայցի ապահովման միջոցների գործողության տևողությունը:
  82. Հայցի նախնական ապահովումը, Հասկացությունը, հիմքերը, դատավարական

կարգը, հետևանքները:

83. Հայցի ապահովման և հայցի նախնական ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձանց շահերի պաշտպանության դատավարական միջոցները (հայցի ապահովման միջոցների փոփոխում (ձևափոխում) և վերացում, հակընդդեմ ապահովում, հայցի ապահովման հետ կապված որոշումների բողոքարկում, ապահովման հետ կապված վնասների հատուցում):
84. Դատական ապացուցման հասկացությունը և նպատակը: Ապացուցողական գործունեության տարրերը:
85. Դատական ապացույցների հասկացությունը: «Ապացույց», «ապացուցման միջոց» և «ապացույցի աղբյուր» եզրույթների տարբերությունը և փոխադարձ կապը:
86. Ապացույցների դասակարգումը. անձնական և իրեղեն, սկզբնական և ածանցական, ուղղակի և անուղղակի, բանավոր, գրավոր և իրեղեն ապացույցներ:
87. Փաստեր վկայակոչելը որպես ապացուցողական գործունեության տարր:
88. Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստեր և ապացուցման ենթակա փաստեր (ապացուցման առարկա): Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմը (նյութաիրավական բնույթի իրավաբանական փաստեր, դատավարական բնույթի իրավաբանական փաստեր, ապացուցողական փաստեր): Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելու աղբյուրները և դատարանի իրավասության սահմանները:
89. Ապացուցման ոչ ենթակա փաստեր. դատարանի կողմից հանրահայտ ճանաչված փաստեր, նախադատելի փաստեր, նոտարական կարգով հաստատված փաստեր և անվիճելի փաստեր:
90. Ապացուցելու պարտականությունը. հասկացությունը, նշանակությունը: Ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելը. ընդհանուր և հատուկ կանոններ:
91. Ապացուցման պարտականությունը բաշխելու դատավարական կարգը:
92. Ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու դատավարական կարգը: Ապացույցներ պահանջելը: Ապացույցների ապահովումը:
93. Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը: Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը որոշելու դատավարական կարգը:
94. Ապացույցների հետազոտման և գնահատման ընդհանուր կանոնները:
95. Վկաների ցուցմունքների հասկացությունը: Վկայի բացարձակ և հարաբերական իմունիտետ: Անձին որպես վկա դատարան կանչելու դատավարական կարգը: Դատարան ներկայանալու և ցուցմունք տալու պարտականությունը: Վկայի հարցաքննության դատավարական կարգը: Վկայի հարցաքննությունը դատական հանձնարարության կարգով: Առերես հարցաքննություն:
96. Գործին մասնակցող անձանց ցուցմունքները: Գործին մասնակցող անձանց հարցաքննության առանձնահատկությունները:

97. Գրավոր ապացույցների հասկացությունը, հատկանիշները և դասակարգումը: Գրավոր ապացույցները ներկայացնելու, հետազոտելու, պահելու և վերադարձնելու դատավարական կարգը: Գրավոր ապացույցների վիճարկումը:
98. Իրեղեն ապացույցների հասկացությունը, հատկանիշները, դրանց տարբերությունը գրավոր ապացույցներից: Իրեղեն ապացույցները ներկայացնելու, պահելու, տնօրինելու և վերադարձնելու դատավարական կարգը: Իրեղեն ապացույցների հետազոտման առանձնահատկությունները:
99. Լուսանկարները (լուսաժապավենները), ձայնագրություններն ու տեսագրությունները որպես ապացույց: Դրանց թույլատրելիության և հետազոտման առանձնահատկությունները:
100. Փորձաքննության և փորձագետի եզրակացության հասկացությունը: Փորձաքննությունն նշանակելու հիմքերը: Փորձաքննության տեսակները: Կոլեկտիվ և համալիր փորձաքննություն: Դատական փորձաքննությունն նշանակելու կարգը: Փորձագետի դատավարական կարգավիճակը: Փորձագետի եզրակացությունը, դրա տեսակները, բովանդակությունը և կառուցվածքը: Փորձագետի եզրակացության հետազոտման առանձնահատկությունները: Լրացուցիչ և կրկնակի փորձաքննություններ:
101. Մասնագետի բացատրությունը քաղաքացիական դատավարությունում:
102. Մասնագետի դատավարական կարգավիճակը:
103. Հայց հարուցելու կարգը և այն չպահպանելու հետևանքները քաղաքացիական դատավարությունում:
104. Հայցադիմումի ձևը և բովանդակությունը: Կից փաստաթղթերը:
105. Հայցադիմումը վերադարձնելը: Հայցադիմումում առկա թերությունները վերացնելը:
106. Հայցադիմումի ընդունումը մերժելը. հիմքերը, դատավարական կարգը:
107. Հայցադիմումի ընդունումը: Հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ գործին մասնակցող անձանց ծանուցելու դատավարական կարգը:
108. Գործը դատական քննության նախապատրաստելու նշանակությունը և խնդիրները քաղաքացիական դատավարությունում: Գործը դատաքննության նախապատրաստելու եղանակները:
109. Նախնական դատական նիստ. նշանակման կարգը, խնդիրները, նիստում կատարվող դատավարական գործողությունների շրջանակը:
110. Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության քննությունը և լուծումը նախնական դատական նիստում:
111. Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը:
112. Հաշտարարությունը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում:
113. Նախնական դատական նիստն ավարտելը և գործը դատաքննության նշանակելը:
114. Դատական ծանուցման առարկան, սուբյեկտները և եղանակները:

115. Ծանուցում պատվիրված նամակով: Ծանուցման խառը եղանակ.  
հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքի միջոցով ծանուցելու  
պայմանները և կարգը:
116. Էլեկտրոնային ծանուցում. եղանակները, դատավարական կարգը:
117. Դատական նիստը՝ որպես բանավոր լսումների դատավարական ձև:
118. Դատական նիստի բաղկացուցիչ մասերը:
119. Նիստերի դահլիճում ներկա գտնվող անձանց վարքագծի հիմնական  
կանոնները: Դատական սանկցիաներ:
120. Դատական նիստի հետաձգումը. հիմքերը, դատավարական կարգը:
121. Վարույթի կասեցումը և վերսկսումը. հիմքերը, դատավարական կարգը:
122. Դատական նիստի արձանագրումը:
123. Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելը. հասկացությունը, հիմքերը,  
դատավարական կարգը և հետևանքները:
124. Գործի վարույթը կարճելը. հասկացությունը, հիմքերը, դատավարական կարգը և  
հետևանքները:
125. Եզրափակիչ դատական ակերի հասկացությունը և տեսակները:
126. Առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերը:
127. Վճռի կայացումը և հրապարակումը:
128. Վճռի ձևը և բովանդակությունը:
129. Դատական ակտերին ներկայացվող էական պահանջները:
130. Դատական ակտում առկա թերությունների վերացումն այն կայացնող  
դատարանի կողմից:
131. Եզրափակիչ դատական ակտերի օրինական ուժը. հասկացությունը,  
ժամկետները և հետևանքները:
132. Հատուկ հայցային վարույթները որպես քաղաքացիական գործերի քննության  
տարբերակված ձևեր. շրջանակը և ընդհանուր բնութագիրը:
133. Հատուկ վարույթները որպես քաղաքացիական գործերի քննության  
տարբերակված ձևեր. շրջանակը և ընդհանուր բնութագիրը:
134. Օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման թույլատրելու  
վարույթը:
135. Միջազգային քաղաքացիական դատավարության ընդհանուր բնութագիրը:
136. Արբիտրաժային վճիռների կատարման համար կատարողական թերթ  
տրամադրելու վարույթը (օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչումն ու  
կատարման թույլատրելը):
137. Արագացված դատաքննություն, կիրառման հիմքերը և դատավարական կարգը:
138. Պարզեցված վարույթ. էությունը, կիրառման հիմքերը և դատավարական կարգը:
139. Հեռակա դատաքննություն. էությունը, կիրառման հիմքերը և դատավարական  
կարգը:
140. Վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումներով գործերի  
վարույթը:

141. Վերաքննության վարույթի հասկացությունը և տեսակները:
142. Վերաքննիչ բողոքարկման իրավունքի սուբյեկտային և օբյեկտային նախադրյալները: Վերաքննիչ բողոք բերելու սահմանափակումները:
143. Վերաքննիչ բողոք բերելու ժամկետները: Բաց թողնված ժամկետների վերականգնման դատավարական կարգը:
144. Վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրականացման կարգը: Վերաքննիչ բողոքի ձևը և բովանդակությունը:
145. Վերաքննիչ բողոքը վերադարձնելը. հիմքերը, դատավարական կարգը:
146. Վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելը. հիմքերը, դատավարական կարգը:
147. Վարույթ ընդունված վերաքննիչ բողոքի քննության կարգը և ժամկետները:
148. Ապացույցների հետազոտումը և նոր ապացույցների ընդունումը վերաքննիչ դատարանի կողմից:
149. Վերաքննության սահմանները:
150. Վերաքննիչ դատարանի լիազորությունները. կազմը, կիրառման հիմքերը:
151. Վերաքննիչ դատարանի որոշումները, դրանց օրինական ուժը:
152. Վճռաբեկ վարույթի հասկացությունը և խնդիրները:
153. Վճռաբեկ բողոք բերելու իրավունքի սուբյեկտային և օբյեկտային նախադրյալները: Վճռաբեկ բողոք բերելու սահմանափակումները:
154. Վճռաբեկ բողոք բերելու ժամկետները: Վճռաբեկ բողոք բերելու իրավունքի ձևական նախադրյալները:
155. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը և դատավարական կարգը:
156. Վճռաբեկ բողոքը ներկայացնելու կարգը խախտելու հետևանքները:
157. Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի քննության դատավարական կարգը: Վճռաբեկության սահմանները:
158. Վճռաբեկ դատարանի լիազորությունները. կազմը, կիրառման հիմքերը:
159. Դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով բեկանելու հիմքերը: Դատական ակտի բեկանման անվերապահ հիմքերը:
160. Վճռաբեկ դատարանի որոշումները և դրանց իրավական բնույթը:
161. Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանի դատական ակտում առկա թերությունների վերացումն այն կայացրած դատարանի կողմից:
162. Դատական ակտի բեկանումից հետո գործի նոր քննությունը:
163. Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով:

### **«ՀՀ վարչական դատավարություն»**

1. Իրավունքների պաշտպանության վարչադատավարական ձևի էությունն ու հատկանիշները.
2. Վարչական դատավարության հասկացությունը և խնդիրները.



3. Վարչական դատավարության իրավունքի հասկացությունը. առարկան, մեթոդը և համակարգը).
4. Վարչական դատավարության տեսակները և փուլերը.
5. Վարչական դատավարության իրավունքի աղբյուրները.
6. Վարչական դատավարության սկզբունքների հասկացությունը. նշանակությունը և համակարգը. օրինականության և հրապարակայնության սկզբունքները վարչական դատավարությունում.
7. Գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքը («ex officio») վարչական դատավարությունում.
8. Մրցակցության և իրավահավասարության սկզբունքը վարչական դատավարությունում.
9. Դատարանը՝ որպես վարչադատավարական իրավահարաբերությունների պարտադիր սուբյեկտ.
10. Կողմերը վարչական դատավարությունում.
11. Երրորդ անձինք վարչական դատավարությունում.
12. Վարչական դատավարությանը մասնակցող այլ անձանց իրավական կարգավիճակի առանձնահատկությունները.
13. Ոչ պատշաճ կողմի հասկացությունը և փոխարինման դատավարական կարգը.
14. Դատավարական իրավահաջորդության էությունը և ձևակերպման դատավարական կարգը.
15. Վարչական դատարանի ընդդատության հասկացությունը և դրա որոշման չափանիշները.
16. Միմյանց հետ կապված պահանջների վերաբերյալ գործերով ընդդատությունը.
17. Դատավարական ժամկետների հասկացությունը և տեսակները.
18. Դատավարական ժամկետների հաշվարկման առանձնահատկությունները.
19. Բաց թողնված դատավարական ժամկետների, վերականգնումը, կասեցումը, երկարաձգումը.
20. Դատական ծախսերի հասկացությունը և տեսակները վարչական դատավարությունում.
21. Պետական տուրքի էությունը, վճարման առանձնահատկությունները և արտոնությունների համակարգը.
22. Գործի քննության հետ կապված այլ ծախսերի կազմը և դրանց որոշման առանձնահատկությունները.
23. Վարչական դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հատուցման դատավարական կարգը.
24. Հայցի հասկացությունը, էությունը, տարրերը և դասակարգումը.
25. Վիճարկման հայցը վարչական դատավարությունում.
26. Պարտավորեցման հացը վարչական դատավարությունում.
27. Գործողության կատարման հայցը վարչական դատավարությունում.

28. Ճանաչման հայցը վարչական դատավարությունում.
29. Հետևանքների վերացման ածանցյալ պահանջը.
30. Հայցի փոփոխումը, միացումը, անջատումը, հայցից հրաժարվելը, հաշտության համաձայնությունը վարչական դատավարությունում.
31. Հայցադիմումի պատասխանի ներկայացումը վարչական դատավարությունում.
32. Հակընդդեմ հայցը վարչական դատավարությունում.
33. Հայցի ապահովման հասկացությունը, հիմքերը և դատավարական կարգը.
34. Հայցի ապահովման միջոցները և դրանց դեմ դատավարության մասնակիցների շահերի պաշտպանության դատավարական միջոցները.
35. Հայցի ապահովման առանձնահատկությունները վիճարկման հայցի ներկայացման դեպքում.
36. Ապացույցի հասկացությունը և դասակարգումը.
37. Վկայի ցուցմունքը. դատավարության մասնակցի ցուցմունքը՝ որպես վկա.
38. Փորձագետի եզրակացությունը.
39. Գրավոր և իրեղեն ապացույցների ընդունման, հետազոտման և գնահատման կանոնները.
40. Ապացուցման առարկան և ապացույցներ ներկայացնելու պարտականությունը.
41. Ապացույցների վերաբերելիությունը, թույլատրելիությունը և արժանահավատությունը.
42. Ապացուցման բեռի բաշխումը՝ ըստ առանձին հայցատեսակների.
43. Հայց հարուցելու կարգը և դրա չպահպանման հետևանքները.
44. Հայցի ընդունումը մերժելը, վերադարձնելը, հայցադիմումի վերահասցեագրումը.
45. Դատաքննության նախապատրաստական փուլը վարչական դատավարությունում.
46. Վարչական գործով դատաքննության նշանակումը և դրա իրավական նշանակությունը.
47. Դատաքննության տարբերակված ձևերը վարչական դատավարությունում. Գրավոր և արագացված դատաքննություն.
48. Դատական սանկցիաները.
49. Վարչական գործի վարույթի կարճումը.
50. Վարչական գործով վարույթի կասեցումը և հետաձգումը.
51. Վարչական գործով իրականացվող վճռահատությունը.
52. Վարչական դատարանի կողմից կայացվող դատական ակտերը և դրանց ներկայացվող պահանջները. վրիպակաների և այլ սխալների ուղղումը, լրացուցիչ վճռի կայացումը.
53. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի էությունը և տեսակները.
54. Միջանկյալ դատական ակտերը վարչական դատավարությունում.
55. Վարչական դատարանի դատական ակտերի իրավական գործողությունը.
56. Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթի նշանակությունը.

57. Նորմատիվ իրավականակ տերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթով վարչական դատարանի իրավասությունը.
58. Նորմատիվ իրավականակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործեր իքննության առանձնահատկությունները.
59. Նորմատիվ իրավականակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատական ակտի կայացումը և դրա հետևանքները.
60. Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթի նշանակությունը.
61. Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթի հարուցումը.
62. Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարույթով վարչական դատարանի իրավասությունը.
63. Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի քննության և վճռահատության առանձնահատկությունները.
64. Հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների եվ գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը.
65. Ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը.
66. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը.
67. Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործերի վարույթը.
68. Հասարակական կազմակերպության ներկայացրած հայցով գործերի քննության վարույթը.
69. Լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը.
70. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը.
71. Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վարույթը.
72. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացման պայմաններն ու նախադրյալները.
73. Միջանկյալ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկման իրավունքի իրացման իրավակարգավորումը.
74. Վերաքննիչ բողոքը վերադարձնելու և բողոքի ընդունումը մերժելու իրավական կարգավորումը.
75. Վերաքննիչ բողոքի քննության առանձնահատկությունները վերաքննիչ վարչական դատարանում.
76. Դատական սխալի հիմքով դատական ակտի բեկանման հիքերը.
77. Վերաքննիչ վարչական դատարանի լիազորությունները և կայացվող դատական ակտերը.

78. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման պայմաններն ու նախադրյալները.
79. Միջանկյալ դատական ակտերի վճռաբեկ բողոքարկման իրավունքի իրացման իրավակարգավորումը.
80. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու և առանց քննության թողնելու իրավական կարգավորումը.
81. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելը.
82. Վճռաբեկ բողոքի քննության առանձնահատկությունները.
83. Վճռաբեկ դատարանի լիազորությունները.
84. Գործի նոր վարույթի հարուցման ժամկետները ու սահմանները.
85. Գործի նոր քննության ընթացքում առկա ահմանափակումների շրջանակը.
86. Գործի նոր քննության ընթացքում գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման առանձնահատկությունները.
87. Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտի վերանայման էությունն ու հիմքերը.
88. Նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման էությունն ու հիմքերը.
89. Նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով դիմումի ներկայացման և քննության առանձնահատկությունները.

**«Քրեական արդարադատություն և փաստաբանություն»  
մագիստրոսական կրթական ծրագիր**

**«Քրեական իրավունք»**

1. Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ. պետության տարածքի հասկացությունը, նավերի և օդանավերի վրա կատարվող հանցագործությունների համար քրեական պատասխանատվության հարցը
2. Տարածության մեջ քրեական օրենքի գործողության մեխանիզմը ըստ անձանց շրջանակի (քաղաքացիության, ունիվերսալ, ռեալ սկզբունքներ, դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված անձինք)
3. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում
4. Քրեական օրենքի հետադարձ ուժը
5. Հանցագործության հասկացությունը, հատկանիշները, հանցագործությունների դասակարգումը
6. Հանցակազմի տարրերն ու հատկանիշները
7. Հանցակազմի տեսակները
8. Հանցագործության օբյեկտի հասկացությունը, հանցագործության օբյեկտը և առարկան: Հանցագործության օբյեկտի տեսակները
9. Տարիքը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ
10. Մեղսունակություն և անմեղսունակություն, սահմանափակ մեղսունակություն
11. Հանցագործության հատուկ սուբյեկտ
12. Հանցագործության սուբյեկտիվ կողմի հասկացությունը, նշանակությունը
13. Դիտավորությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները
14. Անզգուշությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները
15. Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններ
16. Փաստական սխալը օբյեկտի և ծանրացնող հանգամանքների մեջ
17. Փաստական սխալը միջոցների և պատճառական կապի մեջ
18. Հանցագործության օբյեկտիվ կողմի հասկացությունը, նշանակությունը
19. Հանրորեն վտանգավոր արարք
20. Հանրորեն վտանգավոր հետևանքներ
21. Պատճառական կապը և դրա քրեաիրավական նշանակությունը
22. Հանցագործությունների բազմակիության հասկացությունը
23. Հանցագործությունների համակցություն
24. Հանցագործությունների ռեցիդիվ
25. Քրեաիրավական նորմերի մրցակցություն
26. Հանցագործության փուլերի հասկացությունը
27. Հանցագործության նախապատրաստություն
28. Հանցափորձ. հասկացությունը, տեսակները

29. Հանցագործությունից կամովին հրաժարվելը
30. Հանցակցության հասկացությունը, հատկանիշները
31. Հանցակիցների տեսակները
32. Հանցակցության ձևերը
33. Չհաջողված հանցակցություն, հանցակիցների պատասխանատվությունը կատարողի կամքից անկախ հանգամանքներով հանցանքը ավարտին չհասցնելու դեպքում, հանցակցի սահմանազանցում
34. Անհրաժեշտ պաշտպանության հասկացությունը
35. Անհրաժեշտ պաշտպանության ժամանակ ոտնձգությանը վերաբերող իրավաչափության պայմանները
36. Անհրաժեշտ պաշտպանության ժամանակ պաշտպանությանը վերաբերող իրավաչափության պայմանները
37. Ծայրահեղ անհրաժեշտություն. հասկացությունը, իրավաչափության պայմանները
38. Հանցանք կատարած անձին բռնելը. հասկացությունը, իրավաչափության պայմանները
39. Հիմնավորված ռիսկ. հասկացությունը, իրավաչափության պայմանները
40. Հրաման կամ կարգադրություն կատարելը
41. Պատժի հասկացությունը, նպատակները
42. Պատիժը պայմանականորեն չկիրառելը
43. Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը
44. Պատիժ նշանակելը հանցագործությունների և դատավճիռների համակցությամբ
45. Քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում
46. Քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով
47. Դատվածություն
48. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ. հասկացությունը, տեսակները, նշանակելը, փոփոխելը, դադարեցնելը
49. Անչափահասների քրեական պատասխանատվության ու պատժի առանձնահատկությունները
50. Երկու կամ ավելի անձանց սպանություն
51. Սպանություն շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով
52. Առանձին դաժանությամբ սպանություն
53. Շահադիտական դրդումներով և պատվերով սպանություն
54. Անձի կամ նրա մերձավորի սպանությունը կապված անձի կողմից իր ծառայողական կամ հասարակական պարտքի կատարման հետ
55. Սպանություն հոգեկան խիստ հուզմունքի վիճակում
56. Ինքնասպանության հասցնելը, հակելը
57. Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը

58. Բռնաբարությունը և դրա ծանրացնող հանգամանքները
59. Մարդուն առևանգելը կամ ազատությունից զրկելը
60. Հափշտակության հասկացությունը, հատկանիշները, հափշտակությունների ծանրացնող հանգամանքները
61. Գողությունը և դրա ծանրացնող հանգամանքները
62. Կողոպուտը և դրա ծանրացնող հանգամանքները
63. Ավազակությունը և դրա ծանրացնող հանգամանքները
64. Խարդախությունը և դրա ծանրացնող հանգամանքները
65. Յուրացում և վատնում, դրանց ծանրացնող հանգամանքները
66. Շորթումը և դրա ծանրացնող հանգամանքները
67. Գույքային վնաս պատճառելը խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով
68. Կաշառք ստանալը և դրա ծանրացնող հանգամանքները
69. Կաշառք տալը
70. Պաշտոնեական լիազորությունների չարաշահում
71. Պաշտոնեական լիազորությունների անցում
72. Կեղծ փող կամ արժեթղթեր պատրաստելը, իրացնելը կամ պահելը
73. Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը
74. Պետական դավաճանություն
75. Ինքնիրավշություն
76. Սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը
77. Ցուցմունք տալուն հարկադրելը
78. Սուտ մատնություն
79. Հրամանը չկատարելը
80. Դասալքություն

«ՀՀ քրեական դատավարություն»

1. Քրեական հետապնդում. հասկացությունը, սուբյեկտները և նրանց լիազորությունները:
2. Քաղաքացիների հավասարությունը օրենքի և դատարանի առջև:
3. Իրավաբանական օգնության իրավունքի ապահովումը:
4. Մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը:
5. Մրցակցությունը քրեական դատավարությունում:
6. Անմեղության կանխավարկածը:
7. Անձի անձեռնմխելիության հասկացությունը և նշանակությունը:
8. Անձի բնակարանի և գույքի անձեռնմխելիությունը:

9. Գործի արդարացի քննությունը:
10. Կրկին անգամ դատվելու անթույլատրելիությունը:
11. Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը:
12. Դատարանը որպես քրեական դատավարության սուբյեկտ:
13. Դատախազը որպես քրեական դատավարության սուբյեկտ:
14. Քննիչը որպես քրեական դատավարության սուբյեկտ:
15. Քննչական բաժնի պետը:
16. Հետաքննության մարմնի իրավական վիճակը քրեական դատավարությունում:
17. Բացարկ և ինքնաբացարկ: Դրանց լուծման դատավարական կարգը:
18. Մեղադրյալը և նրա դատավարական վիճակը:
19. Պաշտպանը քրեական դատավարությունում:
20. Պաշտպան հրավիրելը, նշանակելը և փոխարինելը:
  1. Պաշտպանից հրաժարվելը:
21. Տուժողը և նրա դատավարական վիճակը:
22. Ընթերակայի, թարգմանչի և դատական նիստի քարտուղարի դատավարական վիճակը:
23. Փորձագետը քրեական դատավարությունում:
24. Վկան և նրա դատավարական վիճակը:
25. Ապացույցի հասկացությունը:
26. Ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը:
27. Ապացուցման առարկան և սահմանները:
28. Ապացույցների հավաքումը, ստուգումը և գնահատումը:
29. Ապացուցման սուբյեկտները: Ապացուցման պարտականությունը:
30. Վկայի և տուժողի ցուցմունքները:
31. Մեղադրյալի ցուցմունքները:
32. Իրեղեն ապացույցների հասկացությունը և տեսակները: Իրեղեն ապացույցների պահպանումը:
33. Փորձագետի եզրակացությունը որպես ապացուցման միջոց:
34. Այլ փաստաթղթեր:
35. Ձերբակալման հասկացությունը, հիմքերը, կարգը և ժամկետները:
36. Խափանման միջոցների հասկացությունը, հիմքերը և տեսակները:
37. Կալանքը որպես խափանման միջոց: Դրա կիրառման հիմքերը և դատավարական կարգը:
38. Գրավը որպես խափանման միջոց և դրա կիրառման դատավարական կարգ:
39. Քրեական գործի հարուցման առիթները և հիմքերը:
40. Քրեական գործի հարուցման դատավարական կարգը:
41. Նախաքննության կատարումը քննչական խմբի կողմից:
42. Քննչական ենթակայությունը:
43. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքերը և կարգը:
44. Մեղադրանքի առաջադրման էությունը և դատավարական կարգը:



45. Քննչական գործողությունների կատարման ընդհանուր կանոնները:
46. Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը:
47. Մեղադրյալի և կասկածյալի հարցաքննության դատավարական կարգը:
48. Զննության հասկացությունը և տեսակները:
49. Առերեսման հասկացությունը և դատավարական կարգը:
50. Խուզարկության հասկացությունը, տեսակները և դատավարական կարգը:
51. Քննման հասկացությունը և դատավարական կարգը:
52. Առգրավման հասկացությունը և դատավարական կարգը:
53. Ճանաչման ներկայացնելու հասկացությունը, տեսակները և դատավարական կարգը:
54. Քննչական փորձարարության հասկացությունը և դատավարական կարգը:
55. Փորձաքննության նշանակման և կատարման դատավարական կարգը:
56. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումները վերահսկելու, հեռախոսային խոսակցությունները լսելու հասկացությունը և դատավարական կարգը:
57. Հետազոտության համար նմուշներ ստանալը:
58. Գույքի վրա կալանք դնելու հիմքերը և դատավարական կարգը:
59. Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը և դատավարական կարգը:
60. Քրեական գործով վարույթի կարճման հիմքերը և դատավարական կարգը:
61. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը:
62. Դատարանի որոշմամբ իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները:
63. Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների ու գործողությունների բողոքարկումը դատարան:
64. Ընդդատության հասկացությունը և տեսակները:
65. Գործը դատական քննության նախապատրաստելիս ընդունվող որոշումները:
66. Դատական քննության սահմանները: Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները:
67. Դատարանի կողմից կիրառվող սանկցիաները:
68. Դատական նիստի նախապատրաստական մասը:
69. Ամբաստանյալի հարցաքննությունը:
70. Վկայի և տուժողի հարցաքննության դատավարական կարգը:
71. Փորձագետի եզրակացության հետազոտումը դատական քննության ընթացքում: Փորձաքննություն կատարելը դատական քննության ժամանակ:
72. Իրեղեն ապացույցների զննումը:
73. Դատական վիճաբանությունների բովանդակությունը և կարգը:
74. Դատավճռի հասկացությունը, տեսակները, կառուցվածքը և բովանդակությունը:

75. Դատական քննության արագացված կարգի հիմքերը, քննությունն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը:
76. Վերաքննիչ բողոք բերելու սուբյեկտները, ժամկետները, հիմքերը և բողոքը վարույթ ընդունելը:
77. Վերաքննիչ դատարանում գործի քննության սահմանները և դատավարական կարգը:
78. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտները, բողոքարկման հիմքերը և կարգը:
79. Վճռաբեկ դատարանում բողոքի քննության սահմանները: Վճռաբեկ դատարանում գործի քննության կարգը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները:
80. Նոր և նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով գործի նորոգումը. հիմքերը, ժամկետները և կարգը: